



ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ. — ՉԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1898 ՀԱՏՈՐ ԵՉ ՄԱՅԻՍ

ՍԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՑԻ

Կ Ա Ր

Կ Ե Ղ Ե - Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ա Ս

(Շար. տես յէջ 136)

2) Ս. Գիրքի — Անանունի երկրորդ աղբիւրը Սեբիտից յետոյ՝ եւ համարում եմ Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը։
Նախ և առաջ մեր Հատուածում՝ մենք պատահում ենք բաւականաչափ թուով յատկանիչ բիրլէական դարձուածքներ, իսկ երբեմն և ամբողջ քաղուածքներ, որոնք յարմարեալ են Հայոց նահապետներին։

Այսպէս՝ Անանունի դարձուածքը (էջ 2) — «Եւ ծնաւ Արամանեակ ուստերս և զստերս բազումս՝ յորոց անդրանիկն Ամասիա։ Եւ ծնաւ Ամասիա ուստերս և զստերս բազումս՝ յորոց անդրանիկն Գեղամ... Հարմա... Արամ, ա բառացի կրկնութիւն է Երենդոց գրքի Ե զխի՝ մի կողմից և Ա. Մնացորդաց Թ գլխի (տուն 25-27, 42 և 50) — միւս կողմից։

Անանունի դարձուածքը (էջ 5)՝ Կ Մեաս և Արամայիտ, և կալաւ զերկիրն որդի նորս Ամասիա։ Եւ սպա յես նորս Գեղամ։ Մեասը Գեղամ՝ և տիրեաց որդի նորս Հարմա, մի և նոյնն է, ինչ որ Ա. Մնացորդաց գրքի գլ. Ա. 43-51։

Երենդոց գրքիցն եւս (Ժ, 9-10, ԺԱ, 5) յարասութեամբ առնուած է Անանունի Կեանեալ հատուածը (էջ 8)։

“ Բայնմ՝ ժամանակի թագաւորեաց ի Բա-
բելոն որսորդ հսկայ Բէլին Տիտանեան... Եւ
էր իշխան ամենայն ազգաց՝ որ սփռեցան ի
վերայ երեսաց ամենայն երկրի , , :

Նոյն իսկ Արարատ երկրի անունը (Ա-
նանուն էլ 2, 4), ուր առաջին անգամ
եկաւ Հայկ Բաբելոնից, և որի անուան տակ
իմանալու է Ասորեստանի մօտ գտնուած
Հայոց հարաւային գաւառներից մէկը, վեր-
ցրած է անկասկած նոյնպէս Սուրբ Գրքից (Գ-
թագաւոր. ԺԹ, 87) :

Ս. Գրքից (Երևոյց ԺԵ, 2) կախումն ունի
Անանունը (էլ 6-7) և այնտեղ, ուր յիշած
է՝ “ Ի Գամակուէ, ասեն, գնացեալ զ Մ ա ր -
ս ե ա կ ն (գմայրն Եղիազարու) զընդոժինն
Աբրահամու ի Հայոս , , (9) : Մի և նոյն ժամանակ
հարկաւոր է նկատել՝ որ Անանուն հեղինակը՝
Հայոց լեզուով արական և իգական սեռերի
համար առանձին վերջաւորութեան պտկասելու
պատճառով, երեւի թէ՛ բիրբէական Մ ա ս ե կ
անունն տակ, որը նա Մ ա ր ս ե ա կ և շի-
նեկ, հասկացել է Աբրահամի սարուկին, ,
այլ ոչ թէ սարկուհուն, որպէս արգարեւ
նա ներկայանում է Սուրբ Գրքի յոյն թարգ-
մանութեան մէջ ըստ Եթթմանանից. “ 6 δὲ
σὶδς Μαζεκ τῆς οἰκογενεὸς μοῦθ, οὗτος Δαμασ-
κὸς Ἐλιέξερ , , :

Մասնացոյց անեմ ի միջի այլոց Անա-
նունի նաեւ հետեւեալ հետաքրքրական պար-
ձուածքը (էլ 7). “ Աղէքսանդր, կայսր Մա-
կեդոնացաց , , որը երկու անգամ կրկնուում
է Ա. Մակարայեցոց գրքում (Ա. 1, 2. 2) :

Սուրբ Գրքի ազդեցութեան եմ վերագրում
ես նաեւ Հայոց հին նահապետների մեծա-
գոյն մասի անունների կազմելը, իսկ այց
այց չէ նշանակում՝ թէ Անանունը վերցրել
է հին կտակարանում առաջին պատահած ա-
նունները և յարմարացրել հայ նահապետ-
ներին : Հետաքրին հայ հնախոյզի մէջ, որը
նպատակ է դրել իրեն գտնել — ստեղծել իր
նախահայրերի անունները, նրբիմաստ միտք
է յղակցել՝ որոնելու նոցա հայրենի երկրի
աշխարհագրական անունների մէջ և վերա-
ստեղծել նոցա ժողովրդական ստուգաբանու-
թեան (volksetymologie) միջոցով, որ ծա-
նօթ էր նոյն իսկ Սուրբ Գրքից. իսկ այդպիսի

անունների պտկութեան հնութեանը՝ մասամբ
և հաւաստութեանը՝ գրաւական պէտք է լի-
նէր՝ սրտեղ հնարաւոր էր, ամենամեծ հե-
ղինակութիւն ունեցող Գիրքը՝ Աստուածա-
շունչը : Կանգ առնելով այդպիսի մտքի վե-
րայ՝ հեղինակը, որ անշուշտ հոգեւոր կրթու-
թիւն ունեցող մի անձնատրուութիւն էր,
ուստի և անգիր գիտէր Սուրբ Գիրքը, — սկսել
է պտնել սորա մէջ Հայաստանի իրեն յայտ-
նի համեմատաբար ոչ այնքան մեծ շրջանի
տեղագրական անունների զուգադէպ կոչում-
ներ, — այն շրջանի, որին սահմանակից են
Առաջին Հայք, Հարք գաւառը, Տուրքե-
րան, Հայոց կենտրոնական Այրարատ աշ-
խարհը, և վերջապէս սորան կից՝ Գեղարշունի
գաւառը :

Նախ և առաջ որոշելու էր Հայոց նախա-
հօրը : Սորա անունը՝ հարկաւ, պէտք է մեր-
ձաւոր յարաբերութիւն ունենար Հայք երկրի
և ժողովրդի ազգային կոչման հետ, և գէթ
կողմնակի կերպով հաստատուէր Սուրբ Գրքով :
Եւ յիշուի, խորասու հեղինակը գտաւ իր
նպատակին կատարելապէս պատշաճ մի ա-
նուն Հայկ (ազգի անունը՝ Հայ) և փառաբա-
կան վերջաւորութեամբ՝ հին Հայերին ծանօթ
առասպելական աղեղնա ձիւղ : Հայկի
անձնատրուութեան մէջ, որ համապատասխա-
նում էր Յունաց Ռրիոնին, և որի փոխարէն
իսկ գրուած է նա Աստուածաշնչի հայ թարգ-
մանութեան մէջ՝ 1. Համաձայն հեղինակի բի-
բլէական հայեազգիներին ազգերի ծագման վե-
րաբերմամբ՝ Հայոց նախահայրը պէտք է Յա-
բեթի սերունդից մէկը լինէր, գորս համար
հոգն անգամ նախապատրաստուած էր : Հա-
յաստանի առաջին ջրիստոնեայ մատենա-
գիրները, հետեւելով նման հայեացքների

1. Մարգ. Եսայեայ ԺԳ, 10, — Իսկ Յովք ԼԷ, 51 :
Տես նոյնպէս Գրեգոր Նազեանիզացու հայերէն
Թարգմանութիւնը “ Աս որս , , ուր պատահում
է Հայկ՝ Ռրիոն համաստեղութեան նշանակու-
թեամբ : Տես Հայախոյզ. քառ. “ Հայկ , , բարձ
տակ : Տես նաեւ հետաքրքիր առասպելական
տեղեկութիւնները Հայկ-Ռրիոնի մասին՝ Տ. Ղ.
Ալեշանի “ Հին հաւատք Հայոց , , Բաւմ-Ան
(1894, յււլիս) :

Հայոց ծագման մասին, դուրս էլ առանց Եւսեբիոսի Քրոնիկոնի¹ ազդեցութեան, առաջացնում էին իրենց ազգը Յարեթի թո՛ւ թորգոմից (Գիրդ Մննդոց Ժ.), նորա այլապէս չեն անուանում Հայերին, բայց միայն « առն », « ազգ », « որդիք թորգոմայ »²։ Անանուր միացրեց Հայոց ազգի երկու ներկայացուցիչ՝ բիրբեական և ազգային՝ ազգացութեան կապերով՝ թորգոմի որդի գարձնելով Հայկին ։ Իրբեւ ժամանակակից աշտարակաշինութեան՝ Հայկը այդ իսկ պատճառով պէտք է մասնակից լինէր հին աշխարհի ամենանշանաւոր անցքին, և միայն լեզուների խառնակուելուց յետոյ գար Բաբելոնից հիւսիս՝ աշխարհի այն գաւառը, որ իբր թէ նորանից ստացաւ Հաւորք³ կոչումը՝ այսինքն Հայրեր՝ վերաբերութեամբ նահապետ Հայկին՝ ազգի « հորը » ։

Ինչ մինչեւ անգամ թվում է՝ թէ Անանունի առջը բերած աւանդութիւնը Բաբելացոց Բեյի դէմ՝ Հայոց Հայկի ունեցած պատերազմի մասին՝ յառաջացել է ոչ առանց Սուրբ Գրքի ակնարկների ազդեցութեան, ակնարկների՝ որոնցից մեծ վարպետութեամբ օգտուել է մեր հեղինակը և կամ նորա ազբերներից մէկը ։

Ուրիշ է սուել Երեմիայի գիրքը, ուր մտադրէն՝ գուշակելով Բաբելոնի և Բեյի անկումը (Ծ-ԾԱ), մարգարէանում էր, թէ՛ « Ել ի վերայ նորա (Բելայ) ազգ ի հիւսի-

ւոյ. նա դիցէ զերկիր նորա յապականու-
թիւն » ։ — « Ահաւասիկ գունդ զայ ի հինս
սխտոյ. ։ աղեղն և վաղակաւոր ի ձեռին իբրում
... պատրաստեալք իբրեւ զհորք ի պատերազմ
ի վերայ քո » ։ — « Եւ ինչորցից զլրժ
ի Բեյայ ի Բաբելն » ։ — Իսկ հիւսիսային
ազգեր ասելով, Երեմիան՝ ինչպէս երեւում
է ՄԱ զլիւից, ակնարկում էր ոչ միայն
Մարաց, այլ և Հայոց ։ Մարգարէն ուղ-
ղակի ասում է. « Չայն առք (ի վերայ Բելայ
և Բաբելոնի)՝ Այրարատեան թագաւորու-
թեանց և Աքանազեան զնդին » ։

Այսպիսի բաւական էր նրբամիտ և ճարտար Անանունին ստեղծելու այն ակնարկի հիման վերայ հիւսիսային ազգի՝ այսինքն Հայոց, առասպելական պատերազմը յանձին նոցա անուանողի (eponymie) Հայկի՝ Բեյի — Բաբելացոց նշնակիսի անուանալի հետ ։ Գիտօր էր սորանից աւելի ախող և աւելի փառաւոր սկիզբն հնարել մի ազգի պատմութեան. աւանդութիւնը հաստատուում էր Սուրբ Գրքի ամենահեղինակաւոր վկայութեան վերայ ։

Մի քանի այլ մանր պարագաներ Երեմիայի գրքում, որպէս են՝ հիւսիսային ազգաց նեւտերի փառաբանութիւնը՝ « Իրբեւ նեւ իմաստուն պատերազմողի ոչ զարծցի ունայն » (Ծ. 9), և կամ հիւսիսային ազգերին ուղղած հրաւերը՝ « կազմեցէք աղեղունս, լցէք զհասարսնս »... (ՄԱ. 11), — Սուրբ Գրքից՝ քաղած այլ անցեկութիւններ հետ միասին ծառայել են Անանունին՝ հիւսիսային երկրի և Բաբելոնի, Հայկի և Բեյի այլ անց պատերազմի մանրագ մասնութիւնները նկարագրելու ։

Երբ արդէն գտնուած էր ազգային անուանադիրը՝ Հայկը, և դրուած էր Հայոց պատմութեան հիւրը, ո՞վ կարող էր աւելի մտալինել առաջին նահապետին, եթէ ոչ Հայոց

1. Հմմտ. Euseb. Chron. Gr. p. 12 (նաեւ Aucher, II, p. 7, Chronograph. Syncl. p. 39). Θοργαμδ 85 οδ Ἀρμένιοι.

2. Հմմտ. Ագաթանգեղ. (էջ 24, 382, 397, 404. Վեներտիկ, 1860) և Փաստասոս (Վեներտիկ, 1832, էջ 2, 82, 83) — առն, ազգ : լեզու, որդիք թորգոմայ :

3. Այդ մերձաւարութիւնը, ինչպէս և ուրիշ շատ սրբապատիւները, չեն զիմանում քննադատութեան. զաւառի Հարք անունը, նոյն և մի լինելով Հայր բառի յոգնակի ուղղականի հետ, սակայն միանգամայն տարբեր բառ է, ինչպէս երևում է յոգնակի սեռականից. Հարք՝ սեռ. Հարքայ և ոչ թէ Հարանց (Հմմտ. և Գարա-գայնանի « Գննական պատմութիւն Հայոց » II, էջ 149) :

1. Հմմտ. օրինակ, Գ. Թագաւոր. դրքի Ը. 13 և Թ. 24 Հայկի արհամարհական խօսքերի հետ զէպի Բելը և վերջինիս՝ Հայոց նահապետի նեւտից կրօն պարտութեան մանրամասնութիւնները հետ. (Անանուն, էջ 4) :

միտ անուանազիրը, որ կազմուած է
 գրացիներէ՝ յոյներէ և պարսիկներէ հայերին
 առած կոչումից — Αρμένιοι, *Armenioi*¹։ Յայտ-
 նի է, որ փրկչական թուից զեռ շատ առաջ
 յիշում են Մեծ և փոքր Հայք (*Armenia
 Magna et Minor*)։ զոցանից վերջի-
 նը Գիսկղեախանութի և Կոտանպիանստի ժա-
 մանակ բաժանուեց երկուս՝ առաջին և եր-
 կորդ Հայք, իսկ Յուստինիանոսի օրով ա-
 սպիացաւ յորս Հայք², որոնցից Առաջին
 Հայքը (Πρότη Αρμενία), որ բովանդակում
 էր իբ մէջ ի Թիւս այլոց և Տարօնը³, զըը-
 խաւորապէս Արմիւնիկ⁴ էր կոչում։ Մի և
 իոյն գաւառուան էին գտնվում և Արմանեակ
 բերգն ու զիւրը⁵։ Ըստ երեւութին՝ յոյները
 անգամ ուղղակի՝ «Արմանեակ», էին կոչում
 Հայերին։ Այդ իսկ անունը՝ այսինքն ազգի
 կոչումը՝ «եակ», փաղաքշաղան վերջաւորու-
 թեամբ, ընդունել է Անանունը՝ իբրեւ
 երկրորդ անուանագիր, իսկ նորա կրողին՝
 մերձագոյն ազգական է համարել Հային,
 կարգելով վերջինիս որդու տեղ։

Սուրբ Գրքումն է գտնում իր բացատրու-
 թիւնը նաեւ Արամանեակի կազմ — ու
 որջու անունը (Անան. էջ 2-4), չը նայե-
 լով իր յուճարէն վերջաւորութեան։ Քրիս-
 տոսի է պարսց յետոյ յիշում է Հայոց
 կազմ-եան⁷ մի իշխանութիւն։ Անանուն հե-

ղինակը նորա համար տոհմական է ստեղ-
 ծել յանձին կազմ-ստի, յենուելով՝ գուրդ,
 Աստուածաշնչի «Կիղմա», կամ «Կիղմ»,
 կոչման վերայ, որ երբայցեքեղն «արեւելք»,
 է նշանակում, («որդիք Կիղիմայ», Ս. Գրքում
 «կոչուած են, օրինակ, Իսմայելացիք, որ
 բնակում էին, ի գետայն Էրզրուացոց մի-
 շու ի գետն մեծ Եփրատ¹, այստեղից է
 և Անանունի «աւու», կամ «կուում»
 կազմեայ (հմմտ. Պատկանեակի վանի ար-
 ձանագր. էջ 110-111)։ — Այդ կոչմամբ
 մեր հեղինակը՝ երեւի թէ հասկանում է
 հիստիային Ասորեստանին ասհմանակից և
 Միջագետքի հիւսիս — արեւելքում գտնուած
 հարաւային հայոց կուրգուք գաւառը (Քու-
 նոփոնի Καρδοχου), որ կարծես մի և նոյնն
 է, ինչ որ իր յիշած Արարոյը (ըստ Փառ-
 տոսի, Գ, 10, Սարարաղ լեան)՝ կորդուք
 գաւառուան էր), որտեղ առաջին անգամ եկաւ
 Հայկը Բարեշնից։ — Առ հասարակ Ան-
 նունը սրոշակէս զանազանում է հարաւային
 Հայաստանի Արարազ երկիրը հիստիային
 Հայաստանի Ալլարատս գաղափայլից։ Հայկը
 գալիս է Բարեշնից նախ Արարազ, այստեղ
 թողնում է իր թոռ Կապուսին (այսինքն՝
 Սուրբ Գրքում յիշած Կիղիմ երկրում) և ինքը
 գնում զէպի հիւսիս՝ Հարք։ Բէլը հե-
 տաժողու է ինում Հայկին, զիմելով հարա-
 ից՝ Արարոյից։ Հարք գաւառում Հայկը
 սպանում է Բէլին և կրկին իջնում Արա-
 րոյ, իսկ իր որդի Արամանեակին պատուի-
 րում է զիմել զէպի հիւսիս՝ Հարք։ Արա-
 մանեակի սերունդները զնային աւելի հեռու
 զէպի հիւսիս և հասան Ալլարազ գաղափ-
 վայրը, որով և վերջանում է՝ Անանունի
 ենթապրութեամբ, Հայաստանի բնակեցնելը
 հարաւից զէպի հիւսիս՝ Արարոյից (Արարա-
 րոյից) զէպի Ալլարազ (Ալլարատս)։

Շարունակելով Հայկի ծննդաբանութիւնը՝
 հեղինակը՝ Արաման-եակ անուան ազգեցու-

1. Spiegel, Die Altpersische Keilinschriften,
 2 Auflage, p. 3.
 2. Հմմտ. Հայոց Աշխարհագր. Ե զարու,
 հրատ. Ք. Պատկանեանի, Պետքերուրդ 1887,
 էջ 84.
 3. Թովմ. Արժրուանի, Պատմ. Պետքերուրդ 1877,
 էջ 107 «մեր ի սահման Տարօնայ Առաջին
 կուցեուք Հայոց», — Հմմտ. նաեւ, էջ 236.
 4. Յովհանն. կարողիկ. Պատմ. Երուսաղ.
 1867, էջ 23-24, 88. «նախ զԱրմենիան (հ. Մ,
 Չամկեանի ձեռագրերը. Պատմ. Հայ. Ա, էջ 74 —
 Արմենիկ), զայն որ Առաջին Հայքն անուա-
 նիւր, Երկրորդ Հայքն զնա Մօրիկ կուցեայ», ...
 5. Թովմ. Արժր. Պատմ. էջ 194.
 6. Յովհաննէս կարողիկ. Պատմ. էջ 23.
 7. Հմմտ. «ա. ներսէսի վարքը» (Սոպիերք,
 2, էջ 33), Շահաբադեանեանի՝ Երեւակացուսն (է
 ք.) վերագրած Հայոց նախարարների ցուցակը,

հ. Բ, հ.ա և հ. Ղ. Ալեքսանի «Ալլարատում»,
 մէջ բերածը.
 1. Հմմտ. Ք. Մենցոյ, ԺԵ, 18, Ա. Մնացորդ-
 Ա, 31. — Կզեկ. ԻԵ, 10. — Երեւմ. ԽԲ, 38.

թեան ներքոյ, գտաւ և երրորդ նահապետին՝ Արամս—յիսին իրեն քաջ ծանօթ իշակերտի ֆրոնիկոնում, ուր մի քանի անգամ յիշուած է համանուն իշպատացի թագաւորը¹ ։

Ս. Գրքի ազգեցութիւնը նկատելի է մա- նուանոց Արամայիսին յաճորդող հինգ նա- հապետներին՝ Աժաօսի աշխի ։ Գեղամի, Հարամաշի, Արամի և Արայի անուն- ների կազմութեան վերայ ։

Հայոց մի անվաներ գրուածքից յայսնի էր Անանունին Առաջին Հայքին գրացի՝ Ամա- սիա քաղաքի առասպելական հիմնադրի ա- նունը, որ ըստ աւանդութեան, Հայքերին էր պատկանում հնումը² ։ Սուրբ Գիրքը հաստա- տում էր այլպիսի անուան գոյութիւնը՝ ի միջի այլոց՝ յանձին երբայցոց Աժաօսի թագաւորի (Բ, Մնացորդ. 27, 1, 26), — և անհ առաջ է գալիս չորրորդ Հայոց նա- հապետ՝ Ամասիա ։

Նոյն կերպով կազմել է Անանունը և Ա- մասիայի Գեղամ որդու և Ժառանգի անունը՝ Գեղ լեռան, Գեղ—աղունի լճի ու գաւառի ան- գամ և գուցէ Գեղամ գաւառի կոչումների հիման վերայ³, և գորան ապացոյց է գտել բիրելական Գեղեղամը⁴ (Նենմ. Է, 51) ։

Դարձեալ, բիրելական անուններին մէջ, որոնք սկսվում են Առաջ կամ Ար լանկով, հեղինակը կարծես ինչ որ հայկական է գտնում՝ գուցէ, Արամս—եակին մերձեցնելով ։ Այս- պէս առաջ են գալիս. Հարմա՝ Հայոց վե-

ցերորդ նահապետը՝ երեւի թէ Հրամայից ձեւակերպուած¹ (Ա. Մնացորդ. Բ. 25), — Հարմայի որդին՝ Արամը, որ համանուն է Սեմի որդի Արամիին (Ա. Մնացորդ Բ, 17, Բ, 34, և այլն), վերջապէս Արայ՝ Հայոց Արա—բող զաչաւալայից, որին ա- նուանակից է գտած Մնացորդաց մի և նոյն գրքում (Է, 38) յանձին Յաթերի որդի՝ Արայի ։ — Արային «գեղեցիկ», ածական է տուած, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ պարու- կերէն արայ (Այ, Այ) բառի թաղանթու- թիւնը, որ իբրք «գեղեցիկ», և նշանակում է իսկ այդ անուան փաստոսի և իշխիկի յի- շած առասպելական «Արա—էղ», էակի հետ մերձեցնելուց Անանունը մեծ վարպետու- թեանը կազմել է Արայի և Շամիրամի սիրա- հարական պատմութիւնը՝ ինչպէս ես կարծում եմ, ոչ առանց ազգեցութեան — մէկ կույմից Դիոդորի պատմութեան՝ Ասորեստանի թա- գուհու մասին, և միտ կողմից՝ գուցէ, կղծմէս Աղէքսանդրացու յիշած աւանդութեան Էր² Հայի մասին (Ἐρδός) ։ Այդ հարցի առթիւ մենք աւելի մանրամասնօրէն կը խօսինք մեր հետազոտութեան 5 գլխում ։

Այսպիսի ստուգարանութեան շնորհիւ և Հայոց Մասիք (Արարատ) լեռան իր ծագու- մը ստանում է Արարատի ստրիւտհիներէց մէկի՝ բիրլական Մասիկի անունից (Իմնեղոց, ժն, 2), որ իբր թէ Հայաստան էր փախել ։ Նոյն իսկ նորա սերունդների անունները՝ փառոսի, փառոսիս և փառական, որոնք՝ Անանունի ասելով, բնական են Գեղ լե- րան մօտ՝ կազմուած են, ինչպէս ինձ թւում է, նոյն լեռան շուրջը գտնուող վայրերի առ- ղագրական անունների հիման վերայ ։ Այդ կարող էր թելալորել մեր հեղինակին Գեղ լեռան կոչման նշանակութեան (գեղեցիկ ու-

1. Հրատ. հ. Մ. Ազգերեանի, Վենետիկ, 1818. Բ. Ա. էջ 104, 111, 112. Բ. 60, 178.
2. Հմմտ. Յովն. կարող. Պատմ. էջ 38.
«Սոփեթք», ժՁ էջ 35—80.
3. Հմմտ. Ստեփան Օրբել. Գեղամաբակ և հրատ. Մ. Էմիւնի, էջ 374.
4. Գեեղամ (Գեղեղամ) ունի Վենետիկեան 1860 թ. հրատարակութիւնը. աւելի հեշտ է Գեղեղամ կարգալ. բայց այս բացատրվում է նորանով, որ զ (լ) և զ տառերը՝ նմանութեան պատճառով, չփոխվում են իրար հետ ։ Հմմտ. Բասարան յատուկ անոնանց, հատոր Բ, Վե- նետիկ, 1769 ։ Ըստ երեւութի՝ Խորենացու ձեւ- ղում եղած Սուրբ Գրքի օրինակում Գեեղամ է եղել ։ Զոհրապետի հրատարակութիւնն եւս Գեեղամ ունի ։

1. Հասմա, նոյնպէս Ռամա և Արամա— առն Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը. Յեսառ Նաւեայ, ժԸ, 25, Նենմ. Է, 30, և այլն ։
2. Հմմտ. Նաեւ բերլեական՝ Յուդայի առ- ղարանիկ՝ Էր, Բ. Եմնը. ԼԸ, 5, Ա. Մնաց. Բ, 3, Գ, 24, և այլն ։ Դիոդոր գիրք Բ. 1. կղեւեւս, Stromata, V.

թիւն) նմանութիւնը յիշեալ անունների հետ, որոնք սկսվում են փառ խօսքով, որ պարսկերէն նոյնպէս գ է դե ց կ ու թ իւն է նշանակում¹ և Արդ՝ փառախոտը բերդ և աւան էր Ալլարասի կողմից զաւառում, որ յիշում է Ե գ ի շ է ն (Վերեւա. հրատ. 1859, էջ 60) ։ Նոյն տեղումն էր, երեւի թէ, և Ա գ ա թ ա ն գ է ղ ի յիշած (էջ 164) “գաշան փառական” ։ Փառական էր կոչվում նաեւ Սիւնեաց երկրի զաւառներից մէկը, որ ձգվում էր Գեղարունի ընի հարաւային կողքի տարածութեամբ. (Ստեփ. Որբէյ. էջ 373) ։

Անանուհի պարսկերէն իրզուհն ծանօթ լինելով պէտք է բացատրել նաեւ Հայկի ութերորդ սերունդ՝ Արային յաճորդող Հայ նահապետների կազմութիւնը՝ այն է Սարհաւգի, Շաւաշի, Փառնաւազի անվամբ և Զարեհի, որոնք իրենց պարսկական ծագմամբ նկատելի կերպով զանազանվում են Հայոց առաջին նահապետների անուններից, Տարօրիակ է թվում միայն այն՝ որ պարսկական անունները երևան են գալիս հայերի մէջ դեռ մարա—պարսկական տիրապետութիւնից շատ առաջ՝ Սենեքերիմից² անվիշակն յետոյ, երբ նոքա՝ ազատուելով Ասորեստանցոց ընդ, մի առ ժամանակ անկախ էին

մինչեւ Հայաստանի նուանումը Նարայդու, նասորի ձեռքով (Անան. էջ 6) ։

Արգարեւ, Սարհաւգ *athleta, pugnator* նշանակութեամբ, ի միջի այլոց, պատահում է *Wis 6 Rãmôn* պարսկերէն հին վէպի մէջ, էջ 393. Իբրեւ յատուկ անուն՝ նա, որքան ինձ յայտնի է, հայ մատենագիրներէրից և ոչ մէկի մօտ մինչեւ փ գարբ չէ պատահում, միայն թովմա Արծրունու շարու նակար (էջ 308)՝ ժԱ գարում, յիշում է մի ոմն՝ “Սրահաւգ Ելիմացի արիւնարբու և շաղգակեր, (որ) Լառ յարարի զդաւան Վասպուրական” ։ — Շաւաշը Զենդ—Աեստայի *Siyavarsna* է և նոր պարսկերէնի *Siavush*. նորա հին ձեւն է *Siavachš* (Ֆիրդաւոսիի և Թարարիի մօտ). անս *Lagarde*, Armen. Stud. էջ 116 ։ Հին հայ յիշատակարաններում Շաւաշ անունը մենք առաջին անգամ գտնում ենք “ս. Թադեոսի վկայարաններեան”, մէջ (հաւանականօրէն Ե դար) ան վերջաորութեամբ՝ իբրեւ *գիւղի աւանուն*՝ “բարաբաղիւղն Շաւաշան” (Ստեփէրք. Ը, էջ 13 և 61) ։ — Փառնաւազը պահլաական ձեւն հին—պարսկերէնի Փարնաֆօշի (անս *Fiek*, *Sriech*. Person.) ։ Հայ մատենագիրներից փառասուն է (Ե, 15) առաջ գործածում այդ անունը ստինական եւն վերջաւորութեամբ — փ ա ու ա զ ե ա ն ։ — Զարեհը իր հնչական կազմութեամբ կարող է համապատասխանել *Zaradshahin* (*Lagarde*, Armen. Sdud. էջ 53). Իսկ ինչ վերաբերում է Սարհաւգի նախորդ՝ Արմոզի անունը, նա կարող էր փոխ առնուած լինել մի և նոյն աղբիւրներից, որոնցից առնուած են և վերայիշեալ անուններից շատերը, այսինքն Սուրբ Գրքից ։ Յայտնի է, որ Սուրբ Գրքի հայերէն թարգմանութեան մի քանի օրինակներում կարգացվում է ոչ սակաւ անգամ Արրոյի անունը, Արգորի և Յարակի փոխարէն (Բ, Օրինաց, Գ, 4, 19, Գաւտաւոց, ժԱ, 13, և այլն) ։ Մի այլ լատի հետ միաորուած Արրոյի ‘պատահում է և Սուրբ Գրքի յիշեալ Վենեական հարթած հրատարակութեան մէջ (Գ, Յետա Նաւեայ, ԻԱ, 11, Թուոց Ա, 10) ։ Քարտաթարրոյի ձեւում էլս ենթադրում եմ, որ Ա-

¹ 1. Տես Սերիոսի Հայերէն բնագիրը ։ հրատ. Պետրուրգի ։ հրատարակչի ծանօթութիւնը, էջ 7 ։

2. Տասն անգամից աւելի է պատահում Սենեքերիմ անունը Սուրբ Գրքում, մի և նոյն ժամանակ նորա հայերէն թարգմանութեան հին օրինակներում այդ անունը այլեւայլ ձեւերով Սենեքերիմ, Աննաքերիմ, Սենեքերիմ, Սենեքարիմ, Իսկ մի զէպքում (Գ. Մակար. Գ, 4) յունարէն *Zevaxhros* ի փոխարէն դրած է Սանատուկ (անս Միսիթար Արքայ Բաթգիրք յատուկ անուանց, մասն Բ, Վենեակ, 1769, էջ 206). Սենեքարիմ ունի և Անանուհը ։ Ափսոս միայն, որ այդ հետաքրքրական տարբեր ընթերցումաձեւերը (բացի վերլինից) Սուրբ Գրքի Վենեական 1860 թ. հրատարակութեան մէջ հարթուած են ։ Իստեփանոսի ժամանակագր. մէջ՝ (Ա. էջ 20—22, 26. Բ, էջ 101) նոյնպէս պատահում են մի և նոյն անունն տարբեր ձեւեր ւ Սենեքերիք և Սենեքերիմ ։

նանունը կարող էր առած լինել Արմոզ
անունը բիրելական Արբոկից, մի և նոյն
ժամանակ նորա ձեռքի տակ գտնուած Հին
ուխտի օրինակի մէջ Արմոզ է եղել՝ փո-
խանակ Արբոկի, որ առաջացել է մ և բ
տառերի իրարու հետ շփոթելուց նոցա նմա-
նութեան պատճառով (հմտ. Սենեքերիւմ և
Սենեքերիբ), և կամ Անանունի Արմոզում
մենք ունինք արտազրոյնների փոփոխած բի-
բլէական Արտոկ անունը: — Մի և նոյնը,
այսինքն բիրելական ծագումը, կարելի էր
վերագրել և Արմոզի նախորդ՝ Չարեհի՝ ա-
նունը, եթէ Անանունի ծանօթութիւնը այդ
անուան հետ պարսկերէնի միջոցով վիճելի
լինէր:

Առանձին ուշադրութեան արժանի է փառ-
նաւազի սերունդների ցուցակը, որից յատ-
կապէս և սկսում է Անանունի կողմնակալ
կամ նպատակաւոր մտեր: Բագարատը՝ այդ
երեւակայեալ տահմապետը Բագրատուն-
նեաց փառաւոր իշխանների, որոնք կառ-
վարում էին Հայաստանը երկու դարուց ի վեր
(Է-Թ Գար Յ. Գ.), իբրև իշխանաց իշխան-
ներ պարսիկների և արաբների սիրապետու-
թեան օրով, և Թ զարում ձեռք բերին ար-
քայական իշխանութիւն, — մեր հասուածի
մէջ հասցրած է, յայտնի խորհրդածութիւն-
ների շնորհիւ, խորին հնութեան, որ հա-
տաստում է գեթ բնականապէս Սուրբ Գրքի
հեղինակաւոր վկայութեամբ: Անանուն Հա-
տուածի հետաքննին հեղինակին ուղղել է
գտնել այդ տահմապետի անունը Նենեմայ
զբքում (Է. 59), որ՝ Նաբուզոդոնտորի բա-
բելոնական գերութիւնից վերագրած իս-
րայելի սրբոց ցուցակում արդարև յիշվում
է Բարբատունիների կարծեցեալ նախաօր
կոչմանը համանման « ֆաքարաբ », անունը՝:

Ինքը Անանունը իր աշխատութեան մէջ
ի հարկէ չէ յիշուած Սուրբ Գրքի վերայ և ոչ
էլ մերձեցնում է Հրեայ ֆաքարարին Հայ
Բագարատի հետ, այլապէս ասելով՝ նա չէ
ցոյց տալիս մեզ մտածողութեան այն զոր-
ժողութիւնը, որ կատարվում էր իւր մէջ այն
րուպէում: Բայց նանաչելով մեր հեղինակի
նուրբ եղանակները, նորա նպատակաւոր հե-
տաքննութիւններն ու մերձեցումները, դժուար
չէ հասկանալ որ Բագարատ անուն յիշելը,
և այն իսկ և իսկ Նաբուզոդոնտորից յետոյ,
առաջացել է մարքերի միտարութիւնից՝ Սուրբ
Գրքի ազդեցութեամբ: Այդ երեւում է նաեւ
նորանից, որ Բագարատի հայր ֆառնաւազը
մեր Հատուածում ժամանակակից է հանգի-
սանում Նաբուզոդոնտորին, որին նա
իբր թէ հնագոյնուց. Բագարատը՝ հետևա-
պէս, իբրև ֆառնուազի որդին, այսինքն
նորանից մի սերունդ յետոյ, կարող էր կեն-
դանի լինել Հրէից ազատման ժամանակ բա-
բելոնեան գերութիւնից, որը, ինչպէս յայտ-
նի է, տևեց մօտ 50 տարի:

Վերջապէս և Բագարատի այստեղ իսկ
յիշուած կապը Անգեղ աստուհեա (Անանուն,
էջ 6) տանում է մեզ գեղի Սուրբ Գիրքը:
Դ. Թագաւորաց զբքում (ԺԷ, 30) Ասորես-
տանից Հրէաստան տեղափոխած այլ և այլ
բարբարոս հեթանոսների կուսքերը թուելիս՝
առած է ի միջի այլոց. « Եւ աբգ Բորաբ
արարին զԱնգեղ (, Kal ol avdres Xous
եթուդսան տն Ներչէլ »:

Այդ ցուցմունքները դարձեալ առիթ են
տալիս Անանունին մերձեցնելու զոցա իր
հայրենիքի աշխարհագրական և ազգագրական
անունների հետ: Նորան ծանօթ էր հին Հայոց
Անգեղ-ասն զուազը (տուն, կալուած Ան-
գեղի ալ), որ առնմանակից էր Է-Ը դարե-
րում Բագարատին ի ներքին պատկանեալ
Տարուն՝ զաւառին, որ և « Առաջին Հայք »,
կոչուած երկրի մասն էր կազմում. շատ հա-
ւանական է, որ այդ իշխանութեան սիրա-

1. Տես Գիրք Նենեմայ, ԺԱ, 24. Ա. Մնա-
ցորաց, Ա, 44, Դ, 24:

2. Ս. Գրքի հայերէն թարգմանութեան մէջ
այդ տեղում գրած է « որդիք ֆաքարաբ »,
յոււնարէն՝ υιοσ φακαραβ. Նայն անունը Եզրի Բ
Գրքում (Բ, 87) պատահում է ֆաքարոթ կամ
ֆաքերովթ ձևերով եւս:

1. Հմտ. Սերիտ, էջ 101. — Թովմ. Արծրա-
նի, էջ 106... 220. — Յովնան կարողիկ, էջ 147
— 150. — Նայնպէս Ասողիկ, Պետրք. 1883, էջ 107:

պետութեան ասմաններէ մէջ էր զանազան
այդ ժամանակ և Անգեղ-տանի մի մասը ,
եթէ ոչ ամբողջ գաւառը : Անանուն հեղե-
նակը գիտէր նոյնպէս Տարոնին և Անգեղ-
տանը սահմանակից՝ Բագրատունիներին անձ-
նատար խոյր գաւառի բնակիչներէ մասին ,
թէ եւ նա չէ յիշում ուղղակի նոցա անունը
և բաւականում է միայն ակնարկելով նոցա
“ բարբարութիւնը ” , — այդ լեռնականների
բնորոշ յատկութիւնը , որ դիտել են ծ դարու
մեր . մատենագիրները ¹ :

Այստեղ Արզէն կան այնպիսի հիմունքներ ,
որոնցից Անանունը կարող էր բիրէական
անունների մերձեցումներ անել , այն է՝ Ան-
գեղ ասածու և բարբարոս փոքր ժողովրդի՝
Անգեղ-տանի և բարբարոս Հայ ցեղի հետ
(տոյր) : Իսկ այն իրողութիւնից , որ Բա-
գրատունիները տիրել են , “ Առաջին
Հայքին ” , (Տարոն) և նրա հետ միասին
գտեցէ և Անգեղ-տանին , նա նոյնացրեց երկու
անունների՝ Բագրատունիների կրօնեցեալ նա-
խօր՝ Բագրատին , որի մէջ հեղինակը
ոչ առանց հիմունքի աստուածութեան գազա-
փար էր անսնում (գտեցէ Ազաթանգեղոսի ազ-
գեցութեան ներքը ²) , և Անգեղին , որի աս-
տուածութիւնը հաստատուում էր Սուրբ Գրքից :

Այն թէ որպիսի ճարտար , հանճարեղ և
բարզ զուգարութիւններ , սրպիսի նուրբ
կշառագոտութիւններ և ծածկախորհուրդ կող-
մակալ նպատակներ ենք մենք անսնում Ա-
նանունի Հայոց նահապետների անունների
ընտրելու և յարմարցնելու մէջ , անունների՝
որոնք առաջին բերան երևում են՝ իբրեւ
մէջ բերած մէկը միսի հետքից միանգամայն
պարզ և բնական կերպով՝ առանց որ և է
յետին մտքի , անգամ և առանց նպատակի :

Թրքմ. Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Շարայայրելի՛

Լ Ե Ջ Ո Ւ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԼԵՋՈՒԻ Ե, Է, Ո, Օ ԳԵՐՈՒԹԻՆ ԱՐՏԱՍԱ-
ՆՈՒԹԻՒՆԸ

Բ Ա Ջ Մ Ա Վ Ե Պ Ի անցեալ տարուան օգոս-
տոսի Մոսքովանդակով առաջարկուած էր Հար-
ցում մը Հայերէն Ե, Է և Ո, օ գրերուն հին
ու նոր արտասանութեան եղանակի մասին .
ներկայ յօդուածս ուղղակի պատասխան մը չէ
թէ և նոյն Հարցումին , սակայն անուղղակի կը
շօշափէ զայն : Մեր Ե, Է, Ո, օ տառերը տարբեր
հնչումներ ունեցած են անշուշտ հնապէս , ըստ
որում տարբեր դիրքը են . Ե և օ գրերուն
հնազոյն հնչումը որոշելի դիրքին է . առաջին
իբրև պարզ օ , և երկրորդը՝ իբր առ (կարգալ
առա , աւ) : Աւելի զժուար է Ե և Է , սակայն
շատ ալ հաւանական է որ ասոնց տարբե-
րութիւնը , տեւողութիւնն եղած ըլլայ միայն .
Ե=կարձ Է , իսկ Է=երկար Է , ինչպէս կը
ցուցնեն օտար տառապարձութիւնները , մաս-
նաւորապէս յիշելով յն . Ե և Դ :

Նկատելի է թէ այլեւայլ լեզուներու մէջ
հնազոյն երկար Է յետոյ վերածուած է Ի-Ի .
այսպէս անգղ. ԵԵ , հնապէս ԷԷ=Է և այժմ
Ի . — յուն . Դ , հին հնչումով Է և այժմ
Ի . այս երևուցիկն կը համաձայնի Հայերէն
է գրին Ի-Ի վերածումը հոյովեալ և օժան-
ցական ձևերու մէջ (սէր , սիրոյ , սիրել)
ընդունելով է իբր Է :

Այսպէս թէ այնպէս , սոյն դիրքերը մեր նոր
գրական ու գաւառական լեզուներուն մէջ
առ հասարակ շփոթուած են . յօդուածին բուն
նպատակն է ուրեմն որոշել անոնց ուղղա-
գրական կանոնները , եթէ երբեք կան , հիմ-
նուելով զխաւարապէս օրինակներու առա-
տուածեան վրայ :

Ե և Է գրերը նախ երկու դիրք կրնան
ունենալ . կամ կը գտնուին ձայնաւորի ըսով
և կամ՝ բաղաձայնի ըսով :

Երբ Ե և Է ձայնաւորի ըսով գտնուին , ա-
նոնցմէ իւրաքանչիւրը կը պահէ իրեն հա-

1. Թովմա Արժրուցի , էջ 120—121 . Յովհանն
կարոյ . էջ 150 .

2. Տես Վենետ . Հրատ . 1862 . “ զար (Տրքատ)
հասանէր ի քաղաքագեղջ Բագ-ուան , որ ա-
նուանեալ կոչի ի պարթեւական լեզուէն Դից-
ուան ” ևս